Պարույր Սևակ

Անվերնագիր 9

Այն առուն, որ ձեր բակով է հոսում,
Անցնում է անվերջ մեր պատի տակով,
Ողջ օրն աղմկում, ուրախ վազվզում,
Տանջում է նրան լուրջ ու կատակով.
Մերթ հրում է նա, մերթ՝ խտուտ բերում
Ինձ նման հլու-հնազանդ պատին:
Պատը սիրում է, ուստի և՝ ներում
Այդ չարաճճի խաղերը անթիվ:
Ձեր առուն շատ է երբ երես առնում,
Իրեն մոռացած՝ պատն էլ, ինձ նման,
Ստվերով զգո՛ւյշ ցած է կռանում,
Ուզում է գրկել-համբուրել նրան:
Փախչելիս, դիտմամբ, առուն սայթաքում,
Ընկնում է հանկարծ գիրկը մեր պատի:
Ստվերը պատի իջնում է թաքուն,
Բայց առուն շտապ ելնում է ոտի:
Շիկնանքը պահած իր պաղ հատակում՝
Մի պահ վարանքով նայում է առուն
Եվ ալիքներով... շրը՛խկ,- ապտակում,
Քրքրջո՛ւմ, քեզ պես, փախչո՛ւմ է հեռու...

10.V.1946թ. 20.VII.1953թ.

Երևան Չանախչի